

1.3. Չներ և սակագներ

2001թ. մայիսին զների փոփոխություններն, ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների.


(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական զների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի զների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման զների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման զների ինդեքս ⁶⁾
Դունվար	104.6	100.7	99.6	99.7	105.1	102.2
Փետրվար	99.1	102.4	100.0	99.8	99.5	98.3
Մարտ	100.02	98.9	100.0	99.8	97.4	97.1
Ապրիլ	99.9	101.4	100.0	99.1	99.7	101.3
Մայիս	101.6	99.5	100.0	100.4	93.6	103.5
Մայիսը 2000թ. դեկտեմբերի նկատմամբ	105.2	99.2*)	99.5	98.8	96.6*)	102.5*)
2001թ. հունվար-մայիսը 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ	103.2	100.7	100.8	104.0	110.6	109.7

*) 2001թ. մայիսի և 2000թ. դեկտեմբերի փաստացի զներով հաշված:
¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ԶԴ-ում զների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների զծով:
²⁾ Գների դիտարկումը կատարվում է 177 արդյունաբերական ոլորտի բազային կազմակերպություններում՝ 624 անվանում արտադրանք - ներկայացուցիչների զծով:
³⁾ Ըստ ԶԴ քաղաքաշինության նախարարության տվյալների:
⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:
⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման զների և ծավալների հետազոտման տվյալների:
⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման զների և ծավալների հետազոտման տվյալների:


Սպառողական զներ: ԶԴ սպառողական շուկայում 2001թ. մայիսին նկատվել է որոշակի սղաճ: 2001թ. մայիսին ապրիլի համեմատ սպառողական զների ինդեքսը կազմել է 101.6%, այդ թվում պարենային ապրանքների հնդ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 102.0%, ոչ պարենային ապրանքների հնդ՝ 101.0%, ծառայությունների սակագների հնդ՝ 100.2%:
 2001թ. մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ սպառողական զների ինդեքսը կազմել է 105.2%, ինչը 4.7 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (100.5%): Նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) զների ինդեքսը կազմել է 107.2%, ոչ պարենային ապրանքների զների հնդ և ծառայությունների սակագների հնդ՝ 100.5%:
 2001թ. հունվար-մայիսին սպառողական զների միջին ամսական հավելաճը կազմել է 1.0%, ինչը 10 անգամ գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը (0.1%):

Սպառողական գների հավելաճը 1995-2001թթ. մայիսին
(տոկոսներով, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)



2001թ. մայիսին նախորդ տարվա մայիսի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 105.2%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 106.5%, ոչ պարենային ապրանքներինը՝ 101.9%, իսկ ծառայությունների սակագներինը՝ 101.8%, իսկ հունվար-մայիսին 2000թ. հունվար-մայիսի համեմատ՝ համապատասխանաբար 103.2%, 103.8, 101.2 և 101.9%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2001թ. հունվար-մայիսին, տոկոսներով
(նախորդ ամիսը = 100)



Արտարժույթային շուկա: 2001թ. մայիսին ապրիլի համեմատ սպառողական շուկայում արձանագրված 1.6% սղաճի պայմաններում հանրապետության արտարժույթի շուկայում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.1% հավելաճ: Մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 5.2% գնաճն ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 0.2% նվազմամբ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդ ցուցանիշների հավելաճը կազմել է համապատասխանաբար 0.5% և 1.9%: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2001թ. մայիսին կազմել է 553.76 դրամ, ինչը շուրջ 3.7%-ով գերազանցել է նախորդ տարվա մայիսի համապատասխան ցուցանիշը (534.14 դրամ):

Պարենային ապրանքների գներ: 2001թ. մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 8.6% գնաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.2% գնանկման դիմաց:

2001թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում արձանագրվել է պարենային ապրանքների 2.3% գնաճ, ինչին մեծապես նպաստել է մրգի և բանջարեղենի ապրանքախմբերում սեզոնայնությամբ պայմանավորված գնաճը:

Մրգի ապրանքախմբում 2001թ. մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 65.9% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է մայիսին (31.6%): Ընթացիկ ամսում նկատելիորեն աճել են կիտրոնի (31.7%), տանձի (26.9%), խաղողի (24.0%), նարնջի (21.5%), ադամաթզի (17.2%) գները: Հանրապետության դիտարկված բոլոր

բնակավայրերում գրանցվել է մրգի 5.2-54.4% գնաճ (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշներ գրանցվել են Եղեգնաձոր, Երևան, Գյումրի, Կապան և Դիլիջան քաղաքներում):

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2001թ. մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 49.2%, իսկ ապրիլի համեմատ՝ 9.5% գնաճ: Դրան մեծապես նպաստել է մայիսին արձանագրված սխտորի (70.4%), գազարի (46.2%), կանաչ լոբու (46.5%), ճակնդեղի (35.5%), կարտոֆիլի (11.9%), կանաչ պղպեղի (10.7%) գնաճը: Հանրապետության դիտարկված բոլոր բնակավայրերում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 1.2-39.5% գնաճ (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Թալիճում):

2001թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում գրանցվել է մսամթերքի 1.4% գնաճ պայմանավորված ոչխարի (3.3%), խոզի (2.5%) և տավարի (2.1%) մսի գնաճով: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 9-ում արձանագրվել է մսամթերքի 0.2-5.1% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Դիլիջանում): Մսամթերքի գների նվազում գրանցվել է միայն Գյումրիում՝ կազմելով 2.8%:

Մայիսին ապրիլի համեմատ կտրուկ նվազել է ձվի գինը՝ կազմելով 13.1%: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 7-ում ձվի գինը նվազել է 23.4--2.5%-ով: Երևանում ձվի գինը նվազել է 17.8%-ով:

2001թ. հունվար-մայիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հանրապետությունում ձվի արտադրությունն աճել է 25.0%-ով, ինչն էլ, թերևս, նպաստել է ձվի գնանկմանը և ներմուծման ծավալների 42.7%-ով կրճատմանը: Միաժամանակ, հարկ է նշել, որ 2001թ. հունվար-մայիսին հանրապետությունից տեղական արտադրության 2.2 մլն. հատ ձու արտահանվել է արտասահմանյան երկրներ:

Ձվի արտադրության, ներմուծման և արտահանման ծավալները ՀՀ-ում

	Արտադրություն	Ներմուծում	Ընդամենը (1+2)	Արտահանում	(մլն. հատ) Ընդամենը ներքին ռեսուրսներ (1 + 2 - 4)
	1	2	3	4	5
2000թ. հունվար-մայիսին	132.0	8.2	140.2	-	140.2
2001թ. հունվար-մայիսին	165.0	4.7	169.7	2.2	167.5

Ձկնամթերքի ապրանքախմբում 2001թ. մայիսին շարունակվել է ապրիլին արձանագրված գնանկման միտումը՝ կազմելով 8.3%, ինչը թարմ ձկան (սիգ) 8.6% գնանկման արդյունք է: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 8-ում արձանագրվել է ձկնամթերքի գների 30.7--3.0% նվազում (գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Մարտունիում), իսկ Վանաձորում և Թալիճում գրանցվել է համապատասխանաբար 4.7% և 1.2% գնաճ:

2001թ. մայիսին ապրիլի համեմատ գների նվազում է գրանցվել նաև հացամթերքի, կաթնամթերքի, կենդանական և բուսական յուղի, շաքարավազի, հրուշակեղենի, սուրճի, թեյի, կակաոյի ապրանքախմբերում՝ կազմելով 0.7-0.1%, իսկ ոչ ոգելից խմիչքի գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2001թ. մայիսին գրանցվել է 0.7% գնաճ, ընդ որում ոգելից խմիչքի գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, իսկ ծխախոտի գնաճը կազմել է 0.7%:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(տոկոսներով)

	2001 թ վ ա կ ա ն ի			
	մայիսը			հունվար-մայիսը 2000թ. հունվար- մայիսի նկատմամբ
	2000թ. դեկտեմբերի նկատմամբ	2001թ. ապրիլի նկատմամբ	2000թ. մայիսի նկատմամբ	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	107.2	102.0	106.5	103.8
Պարենային ապրանքներ	108.6	102.3	108.0	104.8
հացամթերք	100.0	99.9	96.9	96.3
մսամթերք	113.6	101.4	106.4	103.8
ծկնամթերք	74.2	91.7	107.7	113.4
կաթնամթերք	102.2	99.8	105.7	103.4
ծու	90.3	86.9	100.5	103.5
կենդանական և բուսական յուղ	98.2	99.3	98.6	96.7
միրգ	165.9	131.6	146.2	117.2
բանջարեղեն և կարտոֆիլ	149.2	109.5	149.9	136.8
շաքարավազ	97.9	99.8	119.6	121.2
սուրճ, թեյ, կակաո	99.4	99.9	96.4	94.0
հրուշակեղեն	98.3	99.8	97.6	97.6
ոչ ոգելից խմիչք	99.6	100.0	97.9	98.0
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	100.8	100.7	99.3	99.2

Ոչ պարենային ապրանքների գներ. Ոչ պարենային ապրանքների շուկայում 2001թ. մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 0.5% գնաճ, ինչը 0.3 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (0.2%):

2001թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում գրանցված ոչ պարենային ապրանքների 1.0% գնաճը հիմնականում բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 4.9% և 5.1% գնաճի արդյունք է: Չնայած դրան, մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գների գծով արձանագրվել է գնանկում՝ կազմելով համապատասխանաբար 0.7% և 8.8%:

Մայիսին գնաճ արձանագրվել է նաև հազուստի և կտորեղենի, կոշիկեղենի, կահույքի, գորգեղենի, կենցաղային էլեկտրաապրանքների, լվացամիջոցների, գեղահարդարման, ոսկերչական ապրանքների ապրանքախմբերում՝ կազմելով 0.1-0.6%: Տեքստիլեղենի, խոհանոցային սպասքի, շինանյութերի, դեղամիջոցների գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, իսկ վառելիքի, այգեգործական, անձնապիտո, մշակույթի ապրանքների, զրեմական պիտույքների ապրանքախմբերում արձանագրվել է 1.0-0.1% գնանկում (գնանկման ամենաբարձր ցուցանիշը բաժին է ընկնում վառելիքի ապրանքախմբին՝ պայմանավորված հեղուկ գազի գնի 1.4% նվազմամբ):

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(տոկոսներով)

	2001 թ վ ա կ ա ն ի			
	մայիսը			հունվար-մայիսը 2000թ. հունվար- մայիսի նկատմամբ
	2000թ. դեկտեմբերի նկատմամբ	2001թ. ապրիլի նկատմամբ	2000թ. մայիսի նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ <i>այդ թվում.</i>	100.5	101.0	101.9	101.2
հազուստ և կտորեղեն	99.5	100.6	98.5	97.4
վառելիք	86.3	99.0	100.9	101.1
կահույք	98.2	100.1	100.3	101.0
գորգեղեն	98.6	100.1	99.4	101.6

	2001 թվականի			
	մայիսը			հունվար-մայիսը 2000թ. հունվար- մայիսի նկատմամբ
	2000թ. դեկտեմբերի նկատմամբ	2001թ. ապրիլի նկատմամբ	2000թ. մայիսի նկատմամբ	
տեքստիլեղեն	99.5	100.0	105.5	105.7
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.6	100.5	100.7	100.4
խոհանոցային սպասք	99.7	100.0	99.3	99.2
լվացամիջոցներ	100.8	100.3	102.3	101.0
շինանյութեր	99.7	100.0	102.5	103.9
այգեգործական ապրանքներ	99.3	99.6	93.8	97.3
դեղամիջոցներ	114.5	100.0	107.4	107.3
անձնական օգտագործման մեքենա- ներ և բենզին	98.1	104.3	108.4	107.5
մշակույթի ապրանքներ	98.4	99.7	96.3	96.5
գրենական պիտույքներ	99.6	99.3	102.2	102.8
զեղահարդարման ապրանքներ	100.7	100.1	96.6	95.8
ոսկերչական ապրանքներ	96.9	100.3	100.7	96.5
անձնապիտո ապրանքներ	99.4	99.9	98.7	100.1

Ծառայությունների սակագներ: 2001թ. մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում ծառայությունների սակագների հավելաճը կազմել է 0.5%, ինչը 0.1 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (0.6%):

Մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում 0.3-1.1%-ով աճել են մշակույթի ոլորտի, կենցաղային, տրանսպորտի (պայմանավորված միջքաղաքային տրանսպորտի սակագների 1.5% հավելաճով), կապի, կրթության համակարգի, հանգստի կազմակերպման ծառայությունների սակագները: Բուժսպասարկման ծառայությունների սակագները նվազել են 0.1%-ով, իսկ բնակարանային-կոմունալ, հանրային սննդի, իրավական ու բանկային ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(տոկոսներով)

	2001 թվականի			
	մայիսը			հունվար-մայիսը 2000թ. հունվար- մայիսի նկատմամբ
	2000թ. դեկտեմբերի նկատմամբ	2001թ. ապրիլի նկատմամբ	2000թ. մայիսի նկատմամբ	
Վ առայություններ, ընդամենը	100.5	100.2	101.8	101.9
<i>այդ թվում.</i>				
կենցաղային	102.4	100.4	105.1	105.4
բնակարանային-կոմունալ	99.9	100.0	100.0	100.1
բուժսպասարկման	98.8	99.9	99.3	99.7
տրանսպորտի	100.5	100.5	102.9	102.7
կապի	99.7	100.3	101.7	102.0
մշակույթի	100.1	101.1	103.2	103.5
կրթության համակարգի	99.9	100.3	102.3	102.4
հանգստի կազմակերպման	100.8	100.3	103.0	103.1
հանրային սննդի	100.8	100.0	100.3	100.7
իրավական և բանկային	100.0	100.0	104.0	104.0

Սպառողական զների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: 2001թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում դիտարկված բոլոր բնակավայրերում արձանագրվել է սպառողական զների 0.9-3.6% հավելաճ (ամենաբարձր զնաճը գրանցվել է ք. Կապանում, իսկ ամենացածրը՝ Մարտունիում):

Պարենային ապրանքների շուկայում, 2001թ. մայիսին ապրիլի համեմատ, դիտարկված բոլոր բնակավայրերում արձանագրվել է 1.1-5.7% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Կապան և Թալին քաղաքներում):

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2001թ. մայիսի 30-ի դրությամբ

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	(դրամ կգ-ի համար)		Խնձոր
								Գլուխ սոխ	Կաղամբ	
ԳՂ, միջինը այդ թվում.	1137	1343	1394	528	328	250	183	364	192	294
Երևան	1150	1463	1388	541	303	248	176	460	197	283
Գյումրի	1050	1125	1383	527	375	270	193	233	193	333
Վանաձոր	1075	1100	1325	520	395	246	190	200	145	270
Վաղարշապատ	1200	1300	1350	500	270	240	170	250	150	350
Թալին	1200	1200	1350	450	350	250	200	250	150	300
Դիլիջան	1100	1200	1400	484	350	254	250	233	200	350
Հրազդան, Չարենցավան	1200	1250	1400	550	350	250	200	200	180	250
Եղեգնաձոր	1100	1200	1400	450	400	250	150	300	250	350
Մարտունի	1000	1150	1500	500	400	250	200	250	200	350
Կապան	1200	1100	1620	500	430	266	180	270	300	270

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1լիտրի հաշվարկով) 2001թ. մայիսի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6013 դրամ, ինչը 2.3%-ով ցածր է նույնաճանաչ ապրանքատեսակների ապրիլի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (6153 դրամ): Մայիսի 30-ին արձանագրված վերոհիշյալ 5 պարենային ապրանքների միջին հանրապետական գները 30.3-0.6%-ով ցածր են ապրիլի 30-ին գրանցված գներից: Բուսական յուղի և շաքարավազի գները նշված ժամանակահատվածում մնացել են անփոփոխ, իսկ գլուխ սոխի, կարտոֆիլի և խնձորի գծով արձանագրվել է գնաճ կազմելով համապատասխանաբար 29.5%, 25.4 և 4.0%: Դիտարկված բնակավայրերից 7-ում այդ ապրանքների ձեռքբերման ընդհանուր արժեքը 4.5-0.2 տոկոսային կետով ցածր է ապրիլի 30-ի համապատասխան ցուցանիշից, իսկ Եղեգնաձոր, Մարտունի և Կապան քաղաքներում գրանցվել է գնաճ կազմելով 1.8-2.7%: Մայիսի 30-ի դրությամբ նշված ապրանքների ձեռքբերման ամենաբարձր արժեքն արձանագրվել է ք. Երևանում (6208 դրամ), իսկ ամենացածրը՝ ք. Վանաձորում (5466 դրամ):

2001թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում դիտարկված բոլոր բնակավայրերում գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.5-1.9% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Թալինում): Ք. Երևանում այն կազմել է 1.0%:

Բնակչությանը նատուցված ծառայությունների ոլորտում 2001թ. մայիսին հետազոտված բնակավայրերից 8-ում գրանցվել է սակագների 0.1-0.8% հավելաճ (համեմատաբար բարձր հավելաճ արձանագրվել է ք. Գյումրիում): Ք. Վանաձորում արձանագրվել է սակագների 0.1% նվազում, իսկ ք. Կապանում պահպանվել է սակագների ապրիլին գրանցված մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2001թ. մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքախմբերի

(տոկոսներով)

	Սպառողական գների ինդեքսը	<i>այդ թվում</i>				ծառայությունների
		սպառողական ապրանքների	<i>դրանցից</i>			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
ԳՂ, ընդամենը	105.2	106.0	107.2	108.6	100.5	100.5
<i>այդ թվում.</i>						
Երևան	105.7	106.5	107.7	109.0	101.0	100.8
Գյումրի	106.7	107.7	109.7	111.1	98.7	100.9
Վանաձոր	104.5	105.2	106.4	107.8	100.0	99.9
Վաղարշապատ	103.8	104.4	105.3	106.5	100.4	100.0
Թալին	105.6	106.6	108.0	109.7	100.1	100.1
Դիլիջան	104.2	104.9	105.9	107.5	100.4	99.9
Հրազդան, Չարենցավան	103.9	104.5	105.4	106.6	100.4	100.0
Եղեգնաձոր	105.9	106.8	108.1	109.9	100.6	100.3
Մարտունի	102.6	103.0	103.9	104.8	98.7	100.4
Կապան	105.5	106.7	107.9	109.7	101.0	98.7

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս: 2001թ. մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերողների արտադրանքի գները նվազել են 0.8%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ժամակահատվածի 1.2 % գնաճի դիմաց:

2001թ. մայիսին ապրիլի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնանկումը կազմել է 0.5%, ինչը հիմնականում պայմանավորված է հրատարակչական գործերի արտադրության (26.4%), անտառային, փայտամշակման, թղթի-ցեյլոլոզի (9.4%), այլ (ոսկերչական արդյունաբերության) (4.2%), գունավոր մետալուրգիայի (0.5%) թողարկած արտադրանքի գների և էլեկտրաէներգետիկայի սակագների (1.7%) նվազմամբ: Նշված ժամանակահատվածում քիմիական, նավթաքիմիական ու քիմիադեղագործական արդյունաբերությունում պահպանվել է թողարկած արտադրանքի գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ սննդի (ներառյալ ալյուրի և համակցված կերերի), մեքենաշինության, շինանյութերի, թեթև արդյունաբերությունում գրանցվել է 0.9-5.6% գնաճ:

2001թ. մայիսին նախորդ տարվա մայիսի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 101.7%:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս: 2001թ. մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 98.8%՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 100.8%-ի դիմաց: Ի տարբերություն հունվար-ապրիլ ամիսների, որոնց ընթացքում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ընդհանուր նվազումը կազմել է 1.6%, մայիսին ապրիլի համեմատ գրանցվել է սակագների 0.4% հավելաճ: Դրան նպաստել է ավտոմոբիլային, երկաթուղային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների համապատասխանաբար 1.9%, 0.8 և 0.4% հավելաճը, իսկ օդային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

2001թ. մայիսին 2000թ. մայիսի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 102.6%, այդ թվում երկաթուղային տրանսպորտով՝ 103.4%, ավտոմոբիլայինով՝ 100.9%, օդայինով՝ 93.1%, խողովակաշարային տրանսպորտով՝ 103.2%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս: 2001թ. մայիսին 2000թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գները նվազել են 3.4%-ով, իսկ 2001թ. ապրիլի համեմատ՝ 6.4%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է իրացման բոլոր ուղղություններով գյուղատնտեսական մթերքի իրացման գների 12.0-5.1% նվազմամբ:

2001թ. մայիսին ապրիլի համեմատ արձանագրվել է բուսաբուծական մթերքի իրացման 13.6% գնանկում՝ հիմնականում պայմանավորված մրգի իրացման գների 31.0% նվազմամբ: Նշված ժամանակահատվածում գնանկում է արձանագրվել նաև բանջարեղենի և մեղրի ապրանքախմբերում՝ կազմելով համապատասխանաբար 8.6% և 1.8%: Հանրապետության հետազոտված մարզերից 4-ում 2001թ. մայիսին ապրիլի համեմատ զրանցվել է բուսաբուծական մթերքի իրացման 21.5-0.6% գնանկում (գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է Արարատի մարզում): Վայոց Ձորի և Տավուշի մարզերում պահպանվել է բուսաբուծական մթերքի իրացման գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մյուս 4 մարզերում զրանցվել է 1.7-4.9% գնաճ:

Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ՀՀ-ում 1997-2001թթ. մայիսին
(դրամով)

	Չափի միավորը	1997	1998	1999	2000	2001
Ցորեն	կգ	116	168	106	98	122
Գարի	- ,, -	79	143	104	77	96
Լոբի	- ,, -	249	300	354	295	412
Կարտոֆիլ	- ,, -	152	133	129	69	109
Կաղամբ	- ,, -	86	134	139	30	84
Գազար	- ,, -	98	90	120	35	...
Գլուխ սոխ	- ,, -	114	296	300	89	...
Միամյա խոտեր	- ,, -	17	21	22	17	...
Բազմամյա խոտեր	- ,, -	24	37	24	32	40
Խնձոր	- ,, -	145	120	300	228	194
Մեղր	- ,, -	2500	2139	2306	2453	2778
Միս տավարի	- ,, -	852	937	840	835	856
Ոչխարի	- ,, -	1000	1204	950	894	1013
Խոզի	- ,, -	1367	1407	865	1019	1142
Կաթ	լ	108	141	109	97	98
Մածուն	- ,, -	163	170	175	165	168
Պանիր (յուղոտ)	կգ	840	938	879	746	801
Ձու	հատ	46	48	41	36	38

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

2001թ. մայիսին ապրիլի համեմատ արձանագրվել է անասնապահական մթերքի իրացման 2.7% գնանկում՝ պայմանավորված իրացման բոլոր ուղղություններով անասնապահական մթերքի իրացման գների 12.6-0.8% նվազմամբ: Դրան մեծապես նպաստել է կաթնամթերքի (6.7%), ձվի (7.0%), կաշվեհումքի (7.4%) և բրդի (32.5%) ապրանքախմբերում զրանցված գնանկումը: Իրացման գնաճ նկատվել է միայն սասմթերքի ապրանքախմբում՝ կազմելով 3.2%: Մայիսին ապրիլի համեմատ հանրապետության հետազոտված մարզերից 9-ում արձանագրվել է անասնապահական մթերքի իրացման գների 16.1-0.2% նվազում (գների նվազման ամենաբարձր ցուցանիշը զրանցվել է Վայոց Ձորի մարզում), իսկ Արագածոտնի մարզում՝ 3.0% իրացման գնաճ:

2001թ. մայիսին նախորդ տարվա մայիսի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը կազմել է 110.0%, այդ թվում բուսաբուծական մթերքինը՝ 116.5%, անասնապահական մթերքինը՝ 107.3%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսն ըստ մարզերի

	(տոկոսներով)			
	2001թ. մայիսի գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը		2001թ. մայիսի գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2001թ. ապրիլի նկատմամբ	2000թ. մայիսի նկատմամբ	2001թ. ապրիլի նկատմամբ	2000թ. մայիսի նկատմամբ
<i>ՀՀ, ընդամենը</i>	93.6	110.0	103.5	112.6
այդ թվում.				
Արագածոտն	102.3	115.7	100.0	115.9
Արարատ	84.1	93.5	86.2	114.3
Արմավիր	82.5	97.5	101.5	116.8
Գեղարքունիք	97.4	120.7	105.2	104.8
Լոռի	90.9	105.9	102.4	107.5
Կոտայք	98.2	99.3	101.1	117.5
Շիրակ	98.3	113.8	103.1	116.5
Սյունիք	90.8	97.0	105.4	103.2
Վայոց Ձոր	83.9	102.2	102.0	99.3
Տավուշ	99.5	110.1	95.6	113.9

2001թ. մայիսին շարունակվել է ապրիլին արձանագրված գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների աճի միտումը՝ կազմելով 3.5%: Դրան մեծապես նպաստել է անասունների (19.6%), պարարտանյութերի (13.8%), շինանյութերի (12.9%), բույսերի պաշտպանության միջոցների (12.3%) գնման գնաճը և գյուղատնտեսության վճարովի ծառայությունների սակագների հավելաճը (15.5%): Նշված ժամանակահատվածում 0.5% գնաճ է արձանագրվել նաև էներգիայի ու քսայուղերի ապրանքախմբում: Մեքենա-սարքավորումների և դրանց պահեստամասերի գները մնացել են ապրիլին գրանցված գների մակարդակին, իսկ անասնակերի, սերմացուների ու տնկիների և գյուղատնտեսական մանր գործիքների ապրանքախմբերում արձանագրվել է գնանկում՝ կազմելով համապատասխանաբար 1.9%, 3.8 և 6.5%: